Նոր ստացուած ձեռագրեր

Աղդիս Վեհափառ Հայրապետը իւր առաջին շրջաբերական կոնդակներից մէկով պատուիրեց Ռուսաստանի Հայոց առաջնորդներին և փոխանորդներին եկեղեցիներից, վանքերից և անհատներից ժողովել և Էջմիածին ուղարկել հայերէն ձեռագրեր, որոնք ըստ մեծի մասին պահւում են անխնամ վիճակում և ենթակայ են կորստեան: Ի հետևումն այդ հրամանի ստացուել են մինչև օրս բաւական թիւով ձեռագրեր, որոնց համառօտ ցուցակը նուիրաբերողների և ուղարկողների անուանց հետ այս է:

1. (Թ 1355). Թուղթ Պօղոսի, մագաղաթեայ ընտիր ձեռ. 18,5×13 սմ. մեծ 387 թերթ, երկսիւն, գեղեցիկ երկաթագիր. սկսուածք խոշոր տառերով, ոսկեաներ լուսանցազարդերով և կարմիր ձայնանշաններով ընագրի մէջ:

Վերջի յիշ. «..Փափագաւոր եղև սրբասէր վարդապետն Գրիգորէս. և սիրելի եղբայր նորին Խաչիկ, պատուական քահանայք և եղբաւրորդիք սրբազան եպիսկոպոսի Տեառն Գրիգորի. Սերբաստիոյ նահանգին առաջնորդի և սրբոյ նշանին սպասաւորի... Եւ գրեցաւ սա ի սրբազան ուխտս գրագարկիս որ կոչի Աւագ վանք ձեռամբ Թորոսի անիմաստ կրաւնաւորի և սուտ գրչի. ի թուականիս ՈՒԲ (—1173). ի Հայրապետութեան Տեառն Ներսիսի և առաջնորդութեան այսր անապատի Տեառն Սամուէլի...:

«Յերկուց աւրինակաց գրեցաւ. վասն որոյ է բան որ ի դէմն է կրկինն և է որ գիր՝ ի ներքս է բերաած. և նշան ի վերայ եատակ»:

Թուղթք Պօղոսի երկաթագիր՝ հազուագիւտ օրինակ է, որ Թավրիզի Աբրամեան դպրոցի գրատնից բերել է Խաչիկ վարդապետը և իւր մօր ձեռքով Աղդիս Վեհափառ Հայրապետին ներկայացրեց, երբ Սա երկրորդ անգամ այցելեց Զուարթնոց աւերակները:

Ծն. Ձեռագրաց Մայր մատենադարանը համարներով երկուկարգի է բաժանուած. հին թ. 1—2383 և նոր թ. 1—1354, ասել է մինչև օրս համարագրուած են 3737 օրինակ: Բացի այդ առանձին համարներով են Խաչիկ վարդապետի ժողովածուն. ստացուած օրինակների համարագրութիւնը կսկսուի 1355-ից:

2. (Թ. 1356) Ամեստրաց մագաղաթեայ ընտիր ձեռ. 29×20,5 սմ. մեծ. Խէ տեսը, 8-ական թերթից. երկսիւն գեղեցիկ երկաթագրով. ունի գեղեցիկ խոշոր տառեր կինովարով, կանոնների

(9 հատ) և աւ. սկսուածքներում (4 հատ). գեղեցիկ ծաղկագիր զարդագրեր և եօթներեակների սկսուածքներում զարդեր։ Զորս աւ. սկզբի երեսները զարդարուած են համարեա միատեսակ-խորան, խաչաձև լուսանցազարդ, ամբողջ էջի վրայ նկարուած է առաջի գլխագիրը, մի տող զարդագիր և երեքհան տող սակէգիր։ Գոյների մէջ իշխողն է կարմիրը, իսկ սակին միայն յիշեալ տողերում։

Բնագիրն ունի լուսանցագրութիւններ և բոլորովին վերջումն են գրուած. «իրք կնոջն շնացելոյ» և «Մարկոս աւետարանիչ. Յարուցեալ Յիսուս առաւաւտուն». յայտնի յաւելուածները։

Ձեռ. չունի յիշատ. և չի էլ ունեցել առ երևոյթ. բայց գրութեան ձևը և մանաւանդ զարդերն ու տառերը համարեա թէ յարևնման են Մայր Աթոռի թարգմանչաց կոչուած Աւետարանի (թ. 1050) և Տփխիսի Մողնու եկեղեցու օրինակին, հետևապէս գրուած է ԺԴ դարում։

Ա. յս Ձեռ. Կարսի վիճակից բերաւ Ուխտանէս վարդապետը։

Հառիճայի վանքի ձեռ. թուով 20 հատ էջմիածին բերաւ վանահայր Երեմիա վարդապետը։ Սոցանից 13-ը աւետ. 7 եկեղեցական ծիսական այլ գրքեր։

3 (թ. 1357) Գանձարան. հատ թուղթ. Իթ տետր 14-ական թերթից. երկսիւն, մէջակ բոլորգիր. 26×18 ս. մեծ. 24 տողով։

Ցիշ. «Ի՛սառք.. որ ետ կարողութիւն. սխալամիտ և տկար ոգոյ Խաչատրոյ. հատանել յաւարտ գանձարանիս. յամի ՉԾՉ (=1505) թվականիս...» բաց է թողնուած ստացողի անուան տեղը և տարբեր գրչով աւելցրած է.

«Էնայմելիքին հաւրն Աղանպեկին. մօրն Զուահարին. կղ՚ին Գուահին. որդոյն Նորարեին. Ամիրարեին Այլայպէկին. Նուրպէկին, Մարտիրոսին, Պարոնտուկին յիշեցէք.։

Հին յիշ. կայ և այս տեղեկութիւնը. «Եւ արդ գրեցաւ գանձարանս ի թգ՚ին Կարմիգլխոյ. որ էառ զԹաւրէզ. ի յաղդոյլուն. ու բազում արանք արար ու աւեր աշխարհիս էած. բաւէ իմաստից»։

Գանձարանս ունի սկզբում ցանգ գլխոց ճոխ. սկսում է «Մեծ և ահեղ խորհուրդ հրաւիրման.. վՁ. Երգ պաշտաման հայրապետից. «Հայր անբսկիզբն և զթածական անոխակալ...»։

4. (թ. 1358) Աւետարան, հատ թուղթ. Իբ տետր. 12-ական թերթից. 25×17,5) երկսիւն բոլորգիր. ունի 4 խորան, բացի Մատթէոսից միւս աւ. նկարները, հատարակ զարդագրեր, զարդեր և սկզբում մի թերթ մագաղաթեայ պանպա-

նակ երկաթագիր Աւ․ կազմն ունի երկու պղնձէ խաչեր և կոտղեր։

Յիշ․ «Փառք․․․ ձեռամբ․․ Մխիթար անարժան իրիցու․ ցանկալու տանուտէր Թուման․․ յիշեցէք․․ զկենակիցն իւր զԹըլխփաշէն և զեղբայր իւր զԿարապետն․ և զկողակից իւր զՍուլթան․ և զմայրն իւրեանց զխոջա Թաթարն և զկենակից իւր զՍուլխփաշէն և զիւր մայրն, զԱնդրիասն և զկենակիցն իւր, զՋանիբէկն և զիւր կենակիցն (իւր) զԹաթարմամէն․․ (կան և այլ անուններ)․․ կատարեցաւ ի թուականիս Հայոց ՋԼԶ (=1487) ամին ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Վարագայ տէր Յոհաննէս արհեպիսկոպոսիս․․ Տանուտէրն Թուման․․ եդ զսուրբ աւ․ ի դուռն սուրբ Վարդանայ»․

Ունի յիշ․ նաև ՌՃԼԲ (=1683) և ՌՃՁԱ (=1732) թուականներից, աննշան։

Ձեռ․ բնագիրը սովորական է և անկարևոր։

5․ (Թ․ 1359) Աւետարան․ Թուղթ․ անմաքուր վիճակում, ենթարկուած խոնաւութեան․ 24×17․ երկսիւն․ հասարակ բոլորգիր․ աւ․ նկարներով․ բաւական տգեղ։

Չունի գլխաւոր յիշ․ այլ մէջ․ կայ գերութիւնից ազատման թուական․ «․․ ի ՊՀԹ (=1430) երրորդի յունուարի ԻԹ-երերին զսուրբ աւ․ այլազգիւն գերի․ զոր լուեալ ամն քաջահաւատ և բարի անուն պ՞ն Շաղիպէկ և ստացաւ․․» Ունի նաև նորոգման յիշ․ ՌԾԱ (=1602) թուականից։

Բնագիրն անկարևոր է։

6․ (Թ․ 1360) Իրենեոս (Ձեռ․ բերուած է Երևանից։ Սա համառօտ նկարագրուած է ձեռագրերի կազմած հեղինակի հրատարակութեան մէջ։

Հաստ բամբակ թուղթ․ 25×165․ միասիւն, գեղեցիկ բոլորգիր, 20 և 32 տող․ տարբեր խտութեամբ գրուած, միատեսակ գեղագրութեամբ, անմաքուր է, մէջը ցեցակեր թերթերով և թերութիւններով․ ունի 3 թղ․ մագ․ պահպ․ երկաթ․ աւ․։ Այս Ձեռ գրուած է 1265-ից մինչև 1272 թուականը։

ա․ Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց․

1Ջ․ յիշ․ «Զգրող սորա Յովաննէս արքեպ՞ս և բարուն զորդի Քրիստոսատէր և ամենընտիր իշխանաց իշխանին Կոստանդեա Թագապահի և եղբայր բարեպաշտի և քաջի հայոց մեծաց արքայի Հեթմոյ․ որոց յիշատակն աւրհնութեամբ լիցի առաջի Աստուծոյ համայն ծնընդաւք սոցա և ընաւ իւն զարմիւք․․»։

բ․ Իրենիոս, ցանկ գլխոց Ձ1; չէ և բնագիր այս վերնագրով․ «Իրե-

Նիսի ցոյցք առաքելական ժառանգութեանցն: Զայս սիրելի առա-քելով քեզ..»:

Վ.Ջ. «Փառք.. Զա՞ ծարաւ և զեռեցս երանեալ արքեպ՞ն զո՞ր Յովհաննէս զատացող զբոցս զնզքայր սուրբ արքայն յի-շեսջիք ի տ՞ր. և զսառուապեալ զբոզս»:

գ. «Յաղագս բնութեան և գոյացութեան մարդոյ. ի չա-րեց գոյացեալ առեն մարդն..» վՋ թերի է:

գ. Լուծմունք Նարեկայ. «Դրունք յուդնաթախանձ բա-նից..»

ե. «Թուղթ Արամայ զոր գրեաց պատասխանի Առոմայ Անձաւացեաց իշխանի—պէսպէս հարցմանց նորա: Ա՞ծապաշտ և աստուածասէր իշխանից իմոյ մեծազանի ա՞ծատունկ իմաս-տից գիտ և հրաման..»

զ. «Տիրաննոյ հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն Ազուանից Առնեբունեհի և Փիլէի: Ընկալեալ զհրա-մանս և զխնդիրս ձեր յոյժ փութով .»:

Վ Ջ. «Պակասէ ի բան առ բան հարցմանցդ. թերոյն թող-ջիք մեզ. զի զայս գտաք յաւրինակին. և զյոհ. արքեպ՞ս ար-քայեղբայր Կիլիկիոյ ծնողաւք և զարմիւք յիշեցէք ի Ք՞ս. նաև զարբուկ ծառայս նորա Սոեփ. գրիչ Վահկայցի»:

է. «Երանելոյ հաւր Անանիայի գիր խոստովանութեան. Յաղագս սուտ կարծեացն որ վասն նորա: Որպէսզի ծանիցի իմոց բանից ճշմարտութիւն..»: Վ.Ջ. «Կատարեցաւ ձեռնարկ հաւատարմանութեան ճշմարիտ և ուղղափառ խոստովանու-թեան երջանկին այնորիկ հաւր մերոյ Անանիայի»:

ը. «Անանիայի հայոց վ—ի Սակս բացայայտութեան թուոց: Կամ եղև ինձ սակաւ ինչ աշխատասիրել. սակս թուոց..:

թ. «Բարսղի և Գրիգորի խնդիր յաղագս ուղղափառ հա-ւատոյ հարցմունք և պատասխանիք. Կարողութիւն իցէ ար-դեւք պատմել ինչ յաղագս որդւոյ»:

ժ. «Սրբոյն Բարսղի ուղղափառի և Ապաւղինարի հերձ-ուածողի հարցմունք և պատասխանիք: Բարսեղ ասէ. մար-մին մարդկային ունէր Ք՞ս եթէ ոչ...»:

Վ.Ջ. «Աղաչեմ զամենեսեան որք ընթեռնոյք զսա զերկրո-պագողս սուրբ խաչին Ք՞ի Ա՞յ զՍտեփ. յիշեցէք ի մեղաց թո-ղութիւն»:

ժա. «Հարցումն Արձանս թագաւորի և պատասխանի Եզնկայ վ-ի Կողբացւոյ: Արձան ասէ. Զինչ է կրաւնաւորութեան կարգն»:

ժբ. «Նորին Եզնկա խրատ ողէշահ: Աստուածասէրն իւր կամացն որպէս թշնամւոյ զգուշանայ...»:
Թերի է:

Մեսրոպ Եպիսկոպոս